ԳԼՈՒԽ Ե.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՑԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՑԵՏՈՅ

Հոկտեմբերեան յեղաշրջումը հիմնովին փոխեց դէպքերի ընթացքը ինչպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս և Կովկասում: Եւ ամենից առաջ անդրադարձաւ պատերազմի և խաղաղութեան վրա:

Ժամանակաւոր Կառավարութիւնը պատերազմի վերաբերմամբ ընդունել էր միանգամայն որոշ ուղղութիւն — ընդհանուր և պատուաւոր հաշտութիւն: Մարտ 14-ին, Բանուորական և Զինուորական Խորհուրդը դիմելով ամբողջ աշխարհին՝ յայտարարել էր, թէ ազատ Ռուսաստանը հրաժարւում է ցարիզմի նուաճողական քաղաքականութիւնից: Իսկ մարտ 27-ին, Ժամ. Կառավարութիւնը ձեւակերպել էր իր քաղաքական դաւանանքը. «Ազատ Ռուսաստանի նպատակը չէ տիրել ուրիշ ժողովուրդներին, խլել նրանց ազգային արժէքները, ուժով գրաւել օտար երկրներ, այլ հաստատել տեւական խաղաղութիւն՝ հիմնուած ժողովուրդների ինքնորոշման վրա: Ռուս ժողովուրդը չի ձգտում ուժեղացնել իր ներքին կազմը ի հաշիւ ուրիշ ժողովուրդների. նրա նպատակի մէջ չկայ նուաստացման ու ստրկացման և ո՛չ մի հակում»:

Ժամ. Կառավարութիւնը այս ուղեգծին հետևեց իր յետագայ բոլոր քայլերում: Նոյն ոգով գործեց և Պետրոգրադի Բանուորական ու Զինուորական Խորհուրդը՝ Ժամ.Կառավարութեան ներշնչողն ու յենարանը և յեղափոխական դեմոկրատիայի կամքի արտայայտիչը: Խորհուրդը, հակառակ բոլշեւիկների բուռն դիմադրութեան, ապրիլ 26-ին որոշեց չէզոք մի վայրում գումարել միջազգային ընկերվարական խորհրդաժողով և այնտեղ լուծել պատերազմի և խաղաղութեան հարցը միջազգային ծաւալով: Այս որոշումը միանգամայն համապատասխանում էր և Եւրոպայում, մանաւանդ, պատերազմին չմասնակցող երկրներում տիրող տրամադրութեան: Այնտեղ հերթիկ էր դրուած նման խորհրդաժողովի գումարումը և կազմուած էր, այսպէս կոչուած, Հոլանդ-Սկանդինաւական կոմիտէն, որ կատարում էր համագումարի հրաւիրման նախապատրաստական աշխատանքները:

Ընդհանուր համաձայնութեամբ, խորհրդաժողովը նշանակուեց 1917թ. յուլիս 8-ին Սթոկհոլմում: Օրակարգի մէջ դրւում էին պատերազմի հետ կապ ունեցող բոլոր հարցերը, որոնց շարքում և հայկական խնդիրը: Հայաստանի կողմից խորհրդաժողովին պիտի մասնակցէր Հ.Յ.Դաշնակցութիւ-